# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՈՒՐԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. շենք 25
Հեռախոս 093644146 , էլ. Փոստ urasar.lori@mta.gov.am

Թիվ 92
28.09.2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Ա.Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից գրությամբ Ձեզ եմ ներկայացնում Ուրասար համայնքի 22.09.2017թ. կայացած ավագանու նիստի թիվ 16,17,18-Ա,19-Ն,20,21,22 որոշումները:

Առդիր՝ 7 թերթ:

Ուրասար համայնքի ղեկավար Ա.Կիրակոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. 25 շ,
Հեռախոս 093644146 , էլ. փոստ urasar.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » սեպտեմբերի 2017 թվականի, N 16

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ և ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 78-րդ հոդվածով

Ուրասար համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Ուրասար համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերի 25 տարի ժամկետով վարձակալության տրամադրելու համար հետևյալ մեկնարկային գները.
   1.1 Վարելահող՝ 2-րդ կարգի - 1.2703 հա, լոտ 1. 0125-0010 ծածկագ.
   1 հա-ի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 9105 դրամ:

   1.2 Խոտհարք՝ 2-րդ կարգի – 5.4577 հա , լոտ 2 . 0 101-0018 ծածկագ.
   1 հա-ի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 6840 դրամ:
   1.3 Արոտ՝ 2-րդ կարգի 0.13305 հա , լոտ 3 . 0119-0001 ծածկագ.
   1 հա-ի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 6435 դրամ:
2. Ուրասար համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձակալությամբ օգտագործման տրամադրման մրցույթային հանձնաժողովին հանձնարարել օրենսդրությամբ սահմանված կարգով տալ հողամասերի վարձակալության մրցույթ անցկացնելու մասին հայտարարություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Արմեն | [signature] | | |
| Նովոխատսկի Ալեքսանդր | | | |
| Ապիկյան Արման | [signature] | | |
| Ջանոյան Արկադի | | | |
| Ասլանյան Վրեժ | [signature] | | |

**Ուրասար համայնքի ղեկավար՝** **Ա.Կիրակոսյան**

2017 թ. Սեպտեմբերի 22
գ. ՈՒրասար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. 25 շ,
Հեռախոս 093644146, էլ. փոստ urasar.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » սեպտեմբերի 2017 թվականի, N 17

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով <<Մել և Միլ>> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ–ի կողմից կազմած МТЗ -82-1 մակնիշի անիվավոր տրակտոր շարժական գույքի շուկայական արժեքի գնահատման 08.06.2017թ. թիվ 28 և մամլիչ բարդուցիչ շարժական գույքի շուկայական արժեքի գնահատման 08.06.2017թ. թիվ 29 հաշվետվությունները

Ուրասար համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Ուրասար համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքը՝ 1 հատ անիվավոր տրակտորը և 1 հատ մամլիչ բարդուցիչը աճուրդ վաճառքով օտարելու:
2. Աճուրդով վաճառվող շարժական գույքի մեկնարկային գին սահմանել՝ անիվավոր տրակտորի համար 900000/իննը հարյուր հազար/ ՀՀ դրամ,մամլիչ բարդուցիչի համար 300000/ երեք հարյուր հազար/ՀՀ դրամ:Մասնակցության վճարը 1000 ՀՀ դրամ,նախավճարի և քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդով վաճառվող շարժական գույքի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Արմեն | [signature] | | |
| Նովոխատսկի Ալեքսանդր | | | |
| Ապիկյան Արման | [signature] | | |
| Ջանոյան Արկադի | | | |
| Ասլանյան Վրեժ | [signature] | | |

**Ուրասար համայնքի ղեկավար՝** Ա.Կիրակոսյան

2017 թ. Սեպտեմբերի 22
գ. Ուրասար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. 25 շ,
Հեռախոս 093644146 , էլ. փոստ urasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » սեպտեմբերի 2017 թվականի, N 18 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան՝ Ուրասար համայնքի ավագանին

**որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ուրասար համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ուրասար համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 17 -ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Ուրասար համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» N 7-Ա որոշումը:
3. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ավագանու հաստատմանը ներկայացնել որոշումից բխող «Ուրասար համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագիծը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի սեպտեմբերի 25 --ից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Արմեն | [signature] | | |
| Նովոխատսկի Ալեքսանդր | [signature] | | |
| Ապիկյան Արման | [signature] | | |
| Ջանոյան Արկադի | - | | |
| Ասլանյան Վրեժ | [signature] | | |

**Ուրասար համայնքի ղեկավար՝** [signature, stamp] Ա.Կիրակոսյան

2017 թ. սեպտեմբերի 22
գ. ՈՒրասար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. 25 շ,
Հեռախոս 093644146 , էլ. փոստ urasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » սեպտեմբերի 2017 թվականի, N 19 –Ն

### ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1 -Ի <<ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 8 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ուրասար համայնքի ավագանին որոշում է.

1. Ուրասար համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 1 -ի << Ուրասար համայնքի 2017 թվականի նոր խմբագրությամբ բյուջեն հաստատելու մասին>> թիվ 8 -Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Արմեն | [signature] | | |
| Նովոխատսկի Ալեքսանդր | | | |
| Ապիկյան Արման | [signature] | | |
| Ջանոյան Արկադի | | | |
| Ասլանյան Վրեժ | [signature] | | |

**Ուրասար համայնքի ղեկավար՝** Ա.Կիրակոսյան

2017 թ. Սեպտեմբերի 22
գ. Ուրասար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. 25 շ,
Հեռախոս 093644146 , էլ. փոստ urasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » սեպտեմբերի 2017 թվականի, N 20

## <<ԲԵՐՔԻ ՏՈՆ 2017>> ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝

Ուրասար համայնքի ավագանին որոշում է.

1. Ուրասար համայնքի 2017 թվականի բյուջեի այլ մշակույթային կազմակերպություններ ծրագրի 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4819 տնտեսական հոդվածով նախատեսված գումարից 20000 /քսան հազար/ դրամ հատկացնել <<Բերքի տոն 2017>> տոնակատարության կազմակերպական աշխատանքների իրականացման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Արմեն | [signature] | | |
| Նովոխատսկի Ալեքսանդր | | | |
| Ապիկյան Արման | [signature] | | |
| Ջանոյան Արկադի | | | |
| Ասլանյան Վրեժ | [signature] | | |

**Ուրասար համայնքի ղեկավար՝** [signature, stamp] Ա.Կիրակոսյան

2017 թ. Սեպտեմբերի 22
գ. ՈՒրասար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. 25 շ,
Հեռախոս 093644146 , էլ. փոստ urasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » սեպտեմբերի 2017 թվականի, N 21

## ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 17-րդ կետով,հիմք ընդունելով ՀՀ կառավարությաանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի N 186-Ն հրամանի 2-րդ գլխի 5-րդ կետը, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար,քանի որ Ուրասար համայնքի վարչական սահմաններում 06-106-0022-0021 ծածկագրի տակ գտնվող 0.03 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի նկատմամբ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր , ՀՀ կառավարության 08.05.2003թ. N 585-Ն որոշմամբ փոխանցված չէ համայնքին որպես համայնքային սեփականություն, Ուրասար համայնքի ավագանին

**որոշում է.**

1. Ճանաչել 06-106-0022-0021 ծածկագրի տակ գտնվող 0.03 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Արմեն | [signature] | | |
| Նովոխատսկի Ալեքսանդր | | | |
| Ապիկյան Արման | [signature] | | |
| Ջանոյան Արկադի | | | |
| Ասլանյան Վրեժ | [signature] | | |

**Ուրասար համայնքի ղեկավար** Ա.Կիրակոսյան

2017 թ. սեպտեմբերի 22
գ. Ուրասար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. 25 շ,
Հեռախոս 093644146 , էլ. փոստ urasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

« 22 » սեպտեմբերի 2017 թվականի, N 22

## ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ և ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 78-րդ հոդվածով

Ուրասար համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Ուրասար համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-106-0022-0021 կադաստրային ծածկագրով հողամասից 0.03 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողամասը աճուրդ վաճառքով օտարելու:
2. Աճուրդով վաճառվող հողամասի մեկնարկային գին սահմանել 45000 դրամ,մասնակցության վճարը 1000 դրամ,նախավճարի և քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդով վաճառվող հողամասի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Արմեն | [signature] | | |
| Նովոխատսկի Ալեքսանդր | | | |
| Ապիկյան Արման | [signature] | | |
| Ջանոյան Արկադի | | | |
| Ասլանյան Վրեժ | [signature] | | |

**Ուրասար համայնքի ղեկավար՝** Ա.Կիրակոսյան

2017 թ. Սեպտեմբերի 22
գ. Ուրասար